



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

**ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ**

**2021թ. ՀՈՒՆԻՍԻ 20-Ի**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ**

**ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ**

**ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ**

**ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ**

**ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԶԼՄ-ՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ**

**ՄԻԶԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**(2021թ. ՀՈՒՆԻՍԻ 7-12)**

*Սույն հետազոտությունն անցկացվել է IMS (International Media Support) կազմակերպության աջակցությամբ: Ներկայացվող զեկույցի բովանդակությունը լիովին Երևանի մամուլի ակումբի պատասխանատվության ներքո է և պարտադիր չէ, որ արտահայտի IMS-ի տեսակետները:*

## ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

### ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԶԼՄ-ՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ

#### ՄԻԶԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(2021թ. ՀՈՒՆԻՍԻ 7-12)

**ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԵՌԱՐԶԱԿՎՈՂ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ** 2021թ. հունիսի 20-ի ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների լուսաբանման մշտադիտարկումը, որն իրականացնում է Երևանի մամուլի ակումբը, ընդգրկում է հայկական համազգային բոլոր 6 հեռուստատալիքները (Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք, Ա-ԹԻՎԻ, «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», «Շանթ») և Հայաստանի հանրային ռադիոն: Հետազոտությունն անցկացվում է երեք փուլով՝ նախընտրական շրջան (2021թ. մայիսի 31 - հունիսի 6), պաշտոնական նախընտրական քարոզարշավ (2021թ. հունիսի 7-18) և հետընտրական շրջան (2021թ. հունիսի 20-ին ընտրական տեղամասերը փակելու պահից մինչև հունիսի 27-ը): Սույն հաշվետվության մեջ ներկայացվում են վերոնշյալ փուլերից երկրորդի առաջին կեսի՝ 2021թ. հունիսի 7-12-ի արդյունքները (*մշտադիտարկման մեթոդաբանությունը տես ներքևում*):

Ինչպես և [առաջին հաշվետվությունում \(2021թ. մայիսի 31 - հունիսի 6\)](#), մշտադիտարկման թիմը նշում է, որ քաղաքական պայքարի սրությամբ և ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի աննախադեպ քանակով է (26) պայմանավորված այն հանգամանքը, որ ԶԼՄ-ներն ակտիվորեն լուսաբանում էին քարոզարշավը: «Հայոց արծիվներ. միասնական Հայաստան» կուսակցության հրաժարվելը նախընտրական քարոզարշավի անցկացումից այդ իմաստով ոչինչ չի փոխել:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԵՐՈՒՄ** միտումների համեմատությունը թույլ է տալիս կրկին ընդգծել նախընտրական շրջանում հեռարձակող ԶԼՄ-ների օրենսդրական հստակ կարգավորման կարևորությունը: Հունիսի 7-ից սկսած, երբ ընտրություններին մասնակցող քաղաքական բոլոր ուժերին հավասար պայմանների տրամադրումը պարտադիր է, հետազոտված հեռուստա- և ռադիոալիքների կողմից լուսաբանումը դարձավ շատ ավելի հավասարակշռված, քան մինչև նախորդող ժամանակահատվածում էր: Սակայն մի շարք քաղաքական ուժերի համար երկար ժամանակով էթերի սահմանափակ հասանելիությունը, ընտրությունների մասին հայտարարումից հետո՝ ներառյալ, հազիվ թե փոխհատուցվի նախընտրական քարոզարշավի 12 օրվա ընթացքում, նույնիսկ էթե այն ապահովի հավասարակշռված լուսաբանում: Ինչպես բազմաթիվ անգամներ, տարիների ընթացքում իր մեդիա հետազոտություններում նշում է Երևանի մամուլի ակումբը, տվյալ հանգամանքը պահանջում է, որ նախընտրական քարոզարշավների լուսաբանման սկզբունքները տարածվեն շատ ավելի երկար ժամանակահատվածի վրա, քան պաշտոնական քարոզչության 12 օրերն են, ինչը տեղի է ունենում արտահերթ ընտրությունների ժամանակ:

**ՍՈՒՑՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԸՆԴԳՐԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ** ընտրությունների նկատմամբ ամենամեծ ուշադրությունը համազգային հեռարձակողներից ցուցաբերել են Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքը և «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությունը: Այս երկու հեռարձակողների կողմից նախընտրական քարոզարշավին տրամադրված էթերաժամանակի հանրագումարային ծավալը գրեթե երկու անգամ գերազանցել է հետազոտված մյուս հինգ

հեռուստա- և ռադիոալիքների համապատասխան հանրագումարային ցուցանիշը: Ընտրությունների լուսաբանման ակտիվության մակարդակով երկրորդ խմբում են «Շանթ» և «Կենտրոն» հեռուստաընկերությունները (*այստեղ և այսուհետև՝ մշտադիտարկման քանակական արդյունքները տես ներքևի աղյուսակներում*):

Ընդ որում, Երևանի մամուլի ակումբի նախորդ համանման հետազոտությունների արդյունքների հետ համեմատությամբ, հարկ է ընդգծել «Կենտրոն» հեռուստաընկերության կողմից ընտրությունների լուսաբանման աշխատանքներում որոշակի փոփոխությունը: Եթե նախկինում լուսաբանման ինտենսիվությամբ այն մրցակցում էր «Երկիր Մեդիայի» հետ, ապա այս անգամ համեմատաբար փոքր ուշադրություն է ցուցաբերում քարոզարշավին: Բացի այդ, եթե նախկինում «Կենտրոնի» ուշադրության կիզակետում ընդգծված կերպով եղել է այս ալիքի հետ նույնականացվող «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, ապա այժմ, նախընտրական քարոզչության առաջին վեց օրերի ցուցանիշներով, այստեղ ակնհայտ առաջատարը, անդրադարձների և՛ ծավալով, և՛ հաճախությամբ, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն է: «Լուսավոր Հայաստանի» հետ նմանատիպ ցուցանիշներ են գրանցել «Հայաստան» դաշինքը և «Հանրապետություն» կուսակցությունը:

Մյուս երեք համազգային հեռարձակողները՝ «Արմենիան», Ա-ԹԻՎԻՆ և Հանրային ռադիոն, այս նախընտրական քարոզարշավի նկատմամբ ուշադրության աստիճանով էապես հետ են մնում և հետազոտության ներկայացվող փուլում, մի քանի բացառություններով, սահմանափակվել են ընտրությունների լրատվական լուսաբանմամբ:

**ԱՅՆ ԵԹԵՐԱԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ**, որը 2021թ. հունիսի 7-12-ը հետազոտված հեռարձակողների կողմից հատկացվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը և «Հայաստան» դաշինքին, առաջվա պես էականորեն գերազանցել է մյուս 23 քաղաքական ուժերի ցուցանիշները: Սակայն այս տարբերությունն արդեն թույլ չի տալիս խոսել այն մասին, որ նախընտրական մրցապայքարի մասնակիցներից որևէ մեկը զրկված է եղել ուշադրությունից: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը մշտադիտարկման առարկա հանդիսացող բոլոր յոթ հեռուստա- և ռադիոալիքների եթերում դարձել է առաջատար լուսաբանման ինչպես ծավալով, այնպես էլ՝ հաճախությամբ: Սակայն, սա հազիվ թե հիմք է տալիս խոսելու այն մասին, որ ինտենսիվ լուսաբանման հաշվին «Քաղաքացիական պայմանագիրը» հիմնական մրցակիցների նկատմամբ առավելություն է ստացել: Դեպքերի գրեթե կեսում (120՝ 255-ից) իշխող քաղաքական ուժին անդրադարձները ուղեկցվում էին բացասական գնահատականներով և միայն երեք նյութում է այն լուսաբանվել դրական համատեքստում: Ընդ որում, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը նշանային բնութագրիչներով անդրադարձների աննպաստ հարաբերակցություն արձանագրվել է հետազոտված բոլոր ԶԼՄ-ների եթերում: Առանձին վերցրած հեռարձակողներից՝ այս կուսակցության համար ամենից ոչ նպաստավոր հարաբերակցությունը եղել է «Երկիր Մեդիայի» եթերում (0 դրական՝ 38 բացասականի դիմաց), ամենանպաստավորը՝ Հանրային ռադիոյում (0՝ 3): Ընդ որում, հարկ է նշել, որ Հանրային ռադիոյի հաղորդումներում ընդհանրապես արձանագրվել է ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերին նշանային բնութագրիչներով անդրադարձների ամենացածր թիվը:

**ՍՈՒՅՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱԲ ԼԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ** նշանային բնութագրիչներով լուսաբանման մասին խոսելիս անհրաժեշտ է կրկին շեշտել, որ նախորդ ընտրական քարոզարշավների համեմատությամբ, «Կենտրոն» հեռուստաալիքի աշխատանքում փոփոխություններ են տեղի ունեցել. անդրադարձները «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը, որի հետ, ինչպես վերևում նշվեց, նույնականացվում է այս հեռարձակողը, կրել են բացառապես չեզոք բնույթ:

Նշանային բնութագրիչներով անդրադարձների պարունակության ինտենսիվությամբ երկրորդը ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի ղեկավարած «Հայաստան» դաշինքն է, ինչը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հետ այս քաղաքական ուժի առձակատման վրա ընթացիկ ընտրարշավի քարոզչական բաղադրիչի շեշտադրման ևս մեկ հաստատումը դարձավ: «Հայաստան» դաշինքին նշանային բնութագրիչներով անդրադարձները կազմել են դրանց ընդհանուր թվի մեկ երրորդը (43՝ 129-ից), սակայն այս քաղաքական ուժի հաշվեկշիռը նշանակալիորեն ավելի նպաստավոր է (14 դրական 29 բացասականի դիմաց), քան «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության: Մասնավորապես, այս դաշինքի ամենանպաստավոր հաշվեկշիռը արձանագրվել է «Երկիր Մեդիա» հեռուստաալիքում (11՝ 3), իսկ ամենից ոչ նպաստավորը՝ Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքի եթերում (2՝ 14):

Չեզոք լուսաբանումից պատճառաբանված շեղումները արձանագրվել են նաև «Պատիվ ունեմ» դաշինքի դեպքում, որը նույնականացվում է ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի հետ (հետազոտված բոլոր ԶԼՄ-ների անդրադարձների հանրագումարով՝ 1 դրական և 23 բացասական) և «Հայ ազգային կոնգրես» կուսակցության դեպքում, որը գլխավորում է ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը (համապատասխանաբար, 2 և 13 հանրագումարային անդրադարձ): Այս հանգամանքը ապացուցում է, որ հիմնավորված է 2021թ. արտահերթ խորհրդարանական ընտրությունների տարածված բնութագիրը՝ որպես «նախկինների և ներկաների» պայքարի, ինչպես նաև այն, որ ամբողջ ընտրարշավի թեմատիկան կենտրոնացված է Հայաստանի նորագույն պատմության (վերջին 30 տարվա) գնահատականների վրա: Ընդ որում, ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի միջև բանավեճերի կենտրոնում Լեոնային Ղարաբաղի և երկրի անվտանգության հիմնախնդիրներն են, ինչը պայմանավորում է առձակատման առանձնահատուկ սրությունը և զգայական բնույթը:

Մնացած քաղաքական ուժերը լուսաբանվել են հիմնականում չեզոք կերպով: Այլ խոսքով, դրանք չեն դիտարկվել որպես առձակատման սուբյեկտներ՝ անկախ նրանց մոտ քարոզարշավի հիմնական թեմայի վերաբերյալ հստակ արտահայտված դիրքորոշումների առկայությունից:

**ՈՐՊԵՍ ԱՅՍ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ** դրական միտումներ հետազոտության և՛ սկզբում, և՛ այս հաշվետվության ընդգրկման վեց օրերի ընթացքում, ԵՄԱ մշտադիտարկման թիմն արձանագրել է հետևյալը.

- Հունիսի 7-ից սկսած՝ կտրուկ նվազել են առանց կուսակցական պատկանելությունը նշելու «Քաղաքացիական պայմանագիր» այն ներկայացուցիչներին անդրադարձները, որոնք տարբեր ղեկավար պաշտոններ են զբաղեցնում: Սա ենթադրաբար վկայում է այն մասին, որ հետազոտված ԶԼՄ-ները հրաժարվել են իշխող քաղաքական ուժի օգտին կամ ի վնաս նրա թաքնված քարոզչություն անելուց:
- Հետազոտված հեռարձակողների նյութերի բովանդակությունը ծանրակշիռ հիմքեր չի տալիս խոսելու այս քարոզարշավի ընթացքում մեղիառնող սիվիլ ազդեցություն գործելու համար վարչական ռեսուրսի օգտագործման մասին: Ընդ որում, ընտրությունների տեղական դիտորդները բերում են զանազան նախընտրական միջոցառումների կազմակերպման ժամանակ վարչական ռեսուրսի օգտագործման բազմաթիվ վկայություններ:
- Նախընտրական բանավեճերը, որոնք կազմակերպում են ինչպես Հանրային հեռուստատեսությունը, այնպես էլ մասնավոր հեռուստաալիքները, չնայած առանձին

միջադեպերի առկայությանը, անցնում են էականորեն ավելի կառուցողական մթնոլորտում և քաղաքական մշակույթի որոշակի սկզբունքներին հետևելու շատ ավելի մեծ պատրաստակամությամբ, քան նախընտրական քարոզչության շրջանակներում կազմակերպվող միջոցառումները:

- Հետազոտված հեռարձակողների հաղորդումներում գրեթե բացակայում են այն դրվագները, որտեղ երեխաները օգտագործվում են նախընտրական քարոզչության նպատակներով: Թեև հանրության հետ հանդիպումներում, հատկապես Հայաստանի մարզերում, դատելով առցանց ՁԼՄ-ներում և սոցիալական ցանցերում տարածված տեսասյուժեներից, նախընտրական պայքարի մասնակիցները, մասնավորապես «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, բավական հաճախ են դիմում նման մեթոդների:

**ՆՇՎԱԾ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ** ԵՄԱ մշտադիտարկման թիմին թույլ են տալիս կատարել այն նախնական եզրակացությունը, որ նախընտրական քարոզարշավի մեղիա բաղադրիչը, առաջին հերթին՝ համազգային հեռարձակողների գործունեությունը, ավելի շատ է համապատասխանում ՀՀ օրենսդրությանը և միջազգային չափանիշներին, քան նախընտրական քարոզարշավն՝ ընդհանուր առմամբ:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՁԼՄ-ներում** 2021թ. հունիսի 20-ի ՀՀ Ազգային Ժողովի արտահերթ ընտրությունների լուսաբանման մշտադիտարկումն անցկացնում է Երևանի մամուլի ակումբը՝ IMS (International Media Support) կազմակերպության աջակցությամբ իրականացվող «Հայաստանյան ՁԼՄ-ները և ընտրությունները» ծրագրի շրջանակներում:

Մշտադիտարկումն անցկացվում է երեք փուլով.

- **առաջին փուլ**՝ 2021թ. մայիսի 31 - հունիսի 6 (նախընտրական շրջան),
- **երկրորդ փուլ**՝ 2021թ. հունիսի 7-18 (նախընտրական քարոզչության ժամանակահատված),
- **երրորդ փուլ**՝ 2021թ. հունիսի 20 (20.00 մինչև 02.00) - հունիսի 27 (հետընտրական գործընթացներ):

**ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ** ստացված քանակական և որակական տվյալների վերլուծության միջոցով պարզել և սահմանել.

- 2021թ. հունիսի 20-ի ՀՀ Ազգային Ժողովի արտահերթ ընտրությունների նկատմամբ Հայաստանի ՁԼՄ-ների ուշադրության աստիճանը,
- արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի տարբեր դիրքորոշումների ներկայացման հավասարակշռվածության աստիճանը,
- որքան ազատ և անկողմնակալ են ՁԼՄ-ները ընտրազանգվածին տեղեկություններ տրամադրել համապետական ընտրական ցուցակներով ՀՀ ԱԺ ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցությունների/դաշինքների մասին, ապահովել վերջինների մուտքը եթեր՝ իրենց հայացքների, կարծիքների արտահայտման համար՝ դրանով իսկ նպաստելով ընտրողների կողմից ինքնուրույն և գիտակցված ընտրության կատարմանը,
- որքանով են լրատվամիջոցները հետևել նախընտրական քարոզարշավի լուսաբանումը կարգավորող օրենսդրության դրույթներին,
- որքան ակտիվ են ՁԼՄ-ները անդրադարձել հետընտրական իրավիճակին և արտացոլել ընտրական գործընթացի գնահատականների ներկայանակը:

Մշտադիտարկման վերոթվարկյալ խնդիրների իրականացման համար կիրառվել են հետազոտման քանակական և որակա-քանակական մեթոդները: Քանակական մեթոդները ներառում էին հեռարձակվող բովանդակության միավորների և ծավալների զուտ թվաբանական հաշվարկները: Որակա-քանակական մեթոդները հիմնվում էին բովանդակության այն միավորների հաշվարկի վրա, որոնք մշտադիտարկման թիմի կողմից որոշակի վերլուծության են ենթարկվել:

**Մշտադիտարկումն ընդգրկել է 7 հեռարձակող ՁԼՄ.**

- *համազգային վերգետնյա հեռուստաալիքներ՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք, Ա-ԹԻՎԻ, «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», և «Շանթ»,*
- **Հայաստանի հանրային ռադիո:**

**Վերոնջյալ ալիքներում** հետազոտման են ենթարկվել երեկոյան պրայմ-թայմին (18.00-00.00) հեռարձակվող լրատվական ծրագրի հիմնական թողարկումը, լրատվական-վերլուծական հաղորդումները և հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները: Մշտադիտարկման չեն ենթարկվել նախընտրական քարոզչության, առևտրային/սոցիալական գովազդի/հայտարարությունների ներծրագրային բլոկները, ինչպես նաև՝ վազող տողը:

**Մշտադիտարկման առարկա են դարձել.**

- *առաջին փուլում* (նախընտրական շրջան՝ 2021թ. մայիսի 31 - հունիսի 6)՝ բոլոր այն նյութերը, որոնցում անդրադարձ կար 2021թ. հունիսի 20-ի ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների հավանական/գրանցված մասնակիցներին,
- *երկրորդ փուլում* (նախընտրական քարոզչության ժամանակահատված՝ 2021թ. հունիսի 7-18)՝ բոլոր այն նյութերը, որոնցում անդրադարձ կար 2021թ. հունիսի 20-ի ՀՀ ԱԺ արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցություններին/դաշինքներին:

**ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

I. Հետազոտության հիմնական միավորը **հեռուստա-** և **ռադիոնյութն** էր:

***Հեռուստա- և ռադիոնյութ ասելով հասկանում ենք.***

Եթերի՝ թեմատիկորեն, կառուցվածքով և ձևավորմամբ առանձնացված միավորը, այսինքն՝

- լրատվական ծրագրի առանձին սյուժեն,
- հաղորդավարական տեքստով ընթերցվող առանձին տեղեկատվությունը,
- հաղորդման՝ թեմատիկորեն, կառուցվածքով և ձևավորմամբ (միջարկում, բլյում և այլն) առանձնացված մասը (բաժինը, սյուժեն), որն անդրադառնում է տարբեր թեմաների/խնդիրների,
- սյուժեների ներծրագրային ծանուցումները (անոնսները) դիտարկվել են իբրև այն նյութի մաս, որին վերաբերում են,
- սյուժեին (ռեպորտաժին և այլն) նախորդող հաղորդավարական տեքստը դիտարկվել է իբրև այդ սյուժեի (ռեպորտաժի և այլն) մաս:

Ընդամին.

- **Լրատվական/լրատվական-վերլուծական ծրագրերը** բաժանվել են սյուժեների, որոնցից յուրաքանչյուրը դիտարկվել է որպես առանձին ինքնուրույն նյութ,

- **Հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները** դիտարկվել են հետևյալ կերպ.

1. Եթե հաղորդումը նվիրված էր առանձին թեմայի, ապա այն դիտարկվել է որպես մեկ ինքնուրույն նյութ,

2. Եթե հաղորդումը կառուցված էր խճանկարային սկզբունքով, այն է՝ բաժանված էր ինքնուրույն թեմատիկ բաժինների, ապա այդ բաժիններից յուրաքանչյուրը դիտարկվել է որպես առանձին ինքնուրույն նյութ:

**II.** Մշտադիտարկողներն օրական արձանագրում էին հետազոտվող եթերի տևողությունը՝ 18.00-00.00-ին հեռարձակվող լրատվական ծրագրի հիմնական թողարկումը, լրատվական-վերլուծական հաղորդումները և հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները: Այն հաղորդումները, որոնք սկսվում էին, սակայն չէին ավարտվում ժամը **18.00**-ին, չեն դիտարկվել, մշտադիտարկումն սկսվել է տվյալ հաղորդման ավարտից հետո: Այն հաղորդումները, որոնք սկսվում էին, սակայն չէին ավարտվում ժամը **00.00**-ին, դիտարկվել են ամբողջությամբ, մինչև դրանց ավարտը:

Մշտադիտարկման **չեն ենթարկվել.**

- նախընտրական քարոզչության բլոկները,
- առևտրային/սոցիալական գովազդը/հայտարարությունները,
- վազող տողը:

**III.** Մշտադիտարկման ընթացքում **պարզվել և արձանագրվել են.**

**1. Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված նյութերի ընդհանուր քանակը**

Պարզվել և արձանագրվել է այն նյութերի քանակը, որոնք պարունակել են անդրադարձներ 2021թ. հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցություններին/դաշինքներին:

**2. Կուսակցություններին/դաշինքներին անդրադարձների քանակը և ձևը նյութերում**

Պարզվել և արձանագրվել է այն նյութերի քանակը և ձևը, որոնք պարունակել են անդրադարձներ 2021թ. արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցություններին/դաշինքներին:

**Անդրադարձների ձևը** տարբերակվել է հետևյալ կերպ.

**Ա.** Կուսակցությանը/դաշինքին **ամբողջությամբ** նվիրված նյութ



Նյութը համարվում էր X կուսակցությանը/դաշինքին ամբողջությամբ նվիրված, եթե անգամ նրանում կար անդրադարձ մեկ այլ՝ Y կուսակցությանը/դաշինքին, կամ էլ դիտարկման առարկա չհանդիսացող մեկ այլ թեմայի (թեմաների), բայց այդ անդրադարձը *ածանցյալ* բնույթ ուներ: Ընդ որում, եթե նման նյութում կար անդրադարձ (ածանցյալ բնույթի) մեկ այլ՝ Y կամ Z կուսակցության/դաշինքի, ապա տվյալ կուսակցությունը/դաշինքը նույնպես նշվում էր համապատասխան սյունակում՝ կախված նրան անդրադարձի ձևից (մասնակի կամ հիշատակում):

**Բ.** Կուսակցությանը/դաշինքին **մասնակի** նվիրված նյութ.

Նյութը համարվում էր X կուսակցությանը/դաշինքին մասնակի նվիրված, եթե նրանում *հավասարապես* կար անդրադարձ մեկ այլ՝ Y կուսակցությանը/դաշինքին կամ դիտարկման առարկա չհանդիսացող մեկ այլ թեմայի/թեմաների: Ընդամին, եթե նման նյութում հավասարապես առկա էին անդրադարձներ երկու և ավելի կուսակցությունների/դաշինքների, ապա այդ կուսակցություններից/դաշինքներից յուրաքանչյուրը նշվում էր «մասնակի» սյունակում:

**Գ.** Նյութ, որում առկա էր կուսակցության/դաշինքի **հիշատակում**.

Հիշատակում էին համարվում այն դեպքերը, երբ նյութում կուսակցությունները/դաշինքները պարզապես անվանվում էին, բայց նրանց մասին լրացուցիչ տեղեկություն, բնութագրություն չէր տրվում:

Որպես հիշատակում են արձանագրվել նաև այն նյութերը, որոնցում արձարծվել է արտասահմանյան այն կուսակցության գործունեությունը, որն ընդհանուր ծագում և պատմություն ունի մշտադիտարկման օբյեկտ հանդիսացած համանուն կուսակցության հետ, բայց միննույն ժամանակ ոչինչ չի ասվել հայաստանյան համանուն կուսակցության հետ արտասահմանյան այդ կուսակցության կապի մասին:

Կուսակցության/դաշինքի այն ներկայացուցչի հանդես գալը նյութում, որը պաշտոնատար անձ է կամ կատարում է ոչ կուսակցական մասնագիտական պարտականություններ, դիտարկվել է որպես անդրադարձ այդ կուսակցությանը/դաշինքին միայն այն դեպքում, երբ նյութում որևէ կերպ ընդգծվել է վերջինիս պատկանելությունը տվյալ կուսակցությանը/դաշինքին: Հետևաբար, նման անդրադարձը հետազոտվել է վերոթվարկյալ և ներքոթվարկյալ բոլոր կատեգորիաներով (անդրադարձի ձևն ու բնույթը):

Յուրաքանչյուր նյութում արձանագրվում էր յուրաքանչյուր կուսակցությանը/դաշինքին միայն մեկ անդրադարձ և դրա միայն մեկ ձև:

### **3. Կուսակցությունների/դաշինքների անդրադարձների բնույթը նյութերում**

Պարզվել և արձանագրվել է նյութում կուսակցությանը/դաշինքին անդրադարձների բնույթը՝ **դրական (+), բացասական (-) կամ չեզոք (0):**

Նշանային (դրական, բացասական) անդրադարձներ ասելով հասկացվում էին նյութերում առկա այն անդրադարձները, որոնք լսարանի մոտ կուսակցության/դաշինքի մասին միանշանակ դրական կամ բացասական ընդհանուր տպավորություն էին թողնում: Եթե նման միանշանակություն չկար, անդրադարձն արձանագրվում էր որպես չեզոք: Մշտադիտարկողի բոլոր կասկածները նույնպես մեկնաբանվում էին հոգուտ անդրադարձը չեզոք հաշվառելուն:

Բացի այդ, եթե նյութում հաղորդվում էր այն մասին, որ որևէ անձ/կազմակերպություն հրապարակայնորեն հայտարարել է ՀՀ արտահերթ խորհրդարանական ընտրություններում այս կամ այն կուսակցությանը/դաշինքին սատարելու/չսատարելու մասին, ապա վերջինիս անդրադարձն արձանագրվում էր որպես համապատասխանաբար դրական/բացասական:

Յուրաքանչյուր նյութում արձանագրվում էր յուրաքանչյուր կուսակցության/դաշինքի միայն մեկ բնորոշիչ նշան (+, - կամ 0):

Վերը նշված բոլոր կատեգորիաներում հաշվարկը կատարվում էր *միավորներով*:

#### 4. Կուսակցություններին/դաշինքներին ամբողջությամբ կամ մասնակի նվիրված նյութերի եթերաժամանակը

Նախընտրական քարոզարշավի ժամանակ մշտադիտարկման առարկա դարձած ալիքներում հետազոտվել է խմբագրական լուսաբանման մեջ կուսակցությանը/դաշինքին հատկացված եթերաժամանակը:

Եթե նյութն ամբողջությամբ կամ մասնակի էր նվիրված կուսակցությանը/դաշինքին, ապա պարզվել և արձանագրվել է այն *եթերաժամանակը*, որը տրամադրվել է կուսակցությանը/դաշինքին՝ իրենց հայացքները, կարծիքները արտահայտելու, ինչպես նաև այլ անձանց՝ նրանց մասին իրենց դատողություններն ու պատմությունները ներկայացնելու համար:

Կուսակցություններին/դաշինքներին իրենց հայացքները, կարծիքները արտահայտելու կամ նրանց մասին այլոց կողմից դատողություններ անելու կամ պատմելու համար հատկացված եթերաժամանակի չափումն իրականացվում էր հետևյալ սկզբունքով.

1) եթե նյութն ամբողջությամբ նվիրված էր այս կամ այն կուսակցությանը/դաշինքին, ապա դրա ողջ եթերաժամանակը վերագրվել է տվյալ կուսակցությանը/դաշինքին,

2) եթե կուսակցությանը/դաշինքին նվիրվում էր նյութի միայն մի մասը, ապա տվյալ կուսակցությանը/դաշինքին է վերագրվել եթերաժամանակի միայն այն մասը, որը նվիրված էր նրան,

3) եթե X կուսակցությանը/դաշինքին նվիրված նյութում բերվում էին մեկ այլ՝ (X կուսակցությունից/դաշինքից տարբեր) Y կուսակցության/դաշինքի արտահայտությունները կամ այլ անձանց դատողությունները, պատմությունները Y-ի մասին (*առանց X-ի հետ համեմատության*), ապա Y-ին է վերագրվել նյութի այդ մասի համապատասխան եթերաժամանակը,

4) եթե X կուսակցությանը/դաշինքին նվիրված նյութում ներկայացվում էին X-ի արտահայտությունները մեկ այլ՝ Y կուսակցության/դաշինքի մասին կամ՝ Y-ի արտահայտությունները X-ի մասին կամ՝ այլ անձանց դատողությունները, պատմությունները Y-ի մասին՝ *X-ի համեմատությամբ*, ապա այդ նյութի եթերաժամանակի *համապատասխան հատվածի 50-ական տոկոսը* մշտադիտարկողները վերագրել են ինչպես X-ին, այնպես էլ Y-ին:

Այս կատեգորիայում հաշվարկը կատարվել է *վայրկյաններով*:

**ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՑԱՆԿՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ԴԱՇԻՆՔՆԵՐ**

Մշտադիտարկման օբյեկտ են դարձել 22 կուսակցություն և 4 դաշինք, որոնք ՀՀ ԿԸՀ-ում գրանցվել են 2021թ. հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցելու համար:

**ԱՐՏԱՆԵՐԹ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ\***

1.	«Ազատ հայրենիք» դաշինք
2.	Ազատական կուսակցություն
3.	«Ազատություն» կուսակցություն
4.	«Ազգային օրակարգ» կուսակցություն
5.	«Ազգային-ժողովրդավարական բևեռ» համահայկական կուսակցություն
6.	«Արդար Հայաստան» կուսակցություն
7.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն
8.	«Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցություն
9.	«Ինքնիշխան Հայաստան» կուսակցություն
10.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն
11.	«Համահայկական ազգային պետականություն» կուսակցություն
12.	«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն
13.	«Հայաստան» դաշինք
14.	Հայաստանի դեմոկրատական կուսակցություն
15.	Հայաստանի եվրոպական կուսակցություն
16.	«Հայոց արծիվներ. միասնական Հայաստան» կուսակցություն
17.	«Հայոց հայրենիք» կուսակցություն
18.	«Հանրապետություն» կուսակցություն
19.	«Մեր տունը Հայաստանն է» կուսակցություն
20.	«Միասնական հայրենիք» կուսակցություն
21.	«Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք» դաշինք
22.	«Պատիվ ունեմ» դաշինք
23.	«Վերելք» կուսակցություն
24.	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն
25.	«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն
26.	«5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցություն

\* Կուսակցությունների/դաշինքների ցանկը տրվում է հայերեն այբբենական կարգով:

**ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ**  
**2021թ. ՀՈՒՆԻՍԻ 7-12**

Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին պիլք, Ա-ԹԻՎԻ, «Արմենիա»,  
«Երկիր Մեդիա», «Կենտրոն», «Շանթ», Հայաստանի հանրային ռադիո  
7-12 հունիսի, 2021

Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված նյութերի ընդհանուր քանակը (միավոր)						528			
	Կուսակցություններ/դաշինքներ (Կ/Դ)	Կ/Դ-ին անդրադարձների քանակը (միավոր)	Կ/Դ-ին անդրադարձների ձևը (միավոր)			Կ/Դ-ին անդրադարձների բնույթը (միավոր)			Կ/Դ-ին ամբողջությամբ կամ մասնակի նվիրված նյութերի եթերաժամանակը (վրկ)
			Կ/Դ-ին ամբողջությամբ նվիրված նյութեր	Կ/Դ-ին մասնակի նվիրված նյութեր	Կ/Դ-ի հիշատակումներ	+	-	0	
1.	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	255	77	177	1	3	120	132	31338.7
2.	«Հայաստան» դաշինք	129	48	81	0	14	29	86	18238.1
3.	«Պատիվ ունեմ» դաշինք	113	36	76	1	1	23	89	9394.6
4.	«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն	66	25	40	1	2	13	51	9058.7
5.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	43	27	16	0	0	2	41	8784.1
6.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	43	30	11	2	0	0	43	7996.3
7.	«Ազգային-ժողովրդավարական բնեռ» համահայկական կուսակցություն	20	13	7	0	1	1	18	6340.2
8.	«Հանրապետություն» կուսակցություն	28	16	12	0	1	0	27	6076.1
9.	«Մեր տունը Հայաստանն է» կուսակցություն	20	14	6	0	0	0	20	6065.8
10.	«Վերելք» կուսակցություն	21	16	5	0	0	0	21	5634.5
11.	«Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցություն	24	17	7	0	1	0	23	5513.4
12.	«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն	18	14	4	0	0	0	18	5509
13.	«Ազգային օրակարգ» կուսակցություն	10	5	5	0	0	0	10	4240.6
14.	Հայաստանի դեմոկրատական կուսակցություն	26	19	7	0	0	0	26	4214
15.	«Ազատ հայրենիք» դաշինք	16	11	5	0	0	0	16	4173.1
16.	«Ինքնիշխան Հայաստան» կուսակցություն	16	12	4	0	0	0	16	4095.9
17.	«Արդար Հայաստան» կուսակցություն	18	11	7	0	0	0	18	4070.5
18.	«5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցություն	19	14	5	0	0	0	19	4050.8
19.	Հայաստանի եվրոպական կուսակցություն	15	9	6	0	0	0	15	4042.3
20.	«Համահայկական ազգային պետականություն» կուսակցություն	12	5	7	0	0	0	12	4027.1
21.	«Ազատություն» կուսակցություն	14	9	5	0	0	0	14	3462
22.	«Միասնական հայրենիք» կուսակցություն	15	9	6	0	0	0	15	3394.6
23.	«Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք» դաշինք	20	14	6	0	1	0	19	3299.5
24.	«Հայոց հայրենիք» կուսակցություն	11	7	4	0	0	0	11	2949.5
25.	Ազատական կուսակցություն	12	5	7	0	0	0	12	2219.6
26.	«Հայոց արծիվներ. միասնական Հայաստան» կուսակցություն	0	0	0	0	0	0	0	0
	<b>Ընդամենը</b>	<b>984</b>	<b>463</b>	<b>516</b>	<b>5</b>	<b>24</b>	<b>188</b>	<b>772</b>	<b>168189</b>

Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք

7-12 հունիսի, 2021

Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված նյութերի ընդհանուր քանակը (միավոր)						107			
	Կուսակցություններ/դաշինքներ (Կ/Դ)	Կ/Դ-ին անդրադարձների քանակը (միավոր)	Կ/Դ-ին անդրադարձների ձևը (միավոր)			Կ/Դ-ին անդրադարձների բնույթը (միավոր)			Կ/Դ-ին ամբողջությամբ կամ մասնակի նվիրված նյութերի եթերաժամանակը (վրկ)
			Կ/Դ-ին ամբողջությամբ նվիրված նյութեր	Կ/Դ-ին մասնակի նվիրված նյութեր	Կ/Դ-ի հիշատակումներ	+	-	0	
1.	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	49	9	40	0	0	23	26	5644.4
2.	«Պատիվ ունեմ» դաշինք	32	8	24	0	1	12	19	4013.3
3.	«Ազգային-ժողովրդավարական բևեռ» համահայկական կուսակցություն	7	5	2	0	0	0	7	3704.8
4.	«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն	7	4	3	0	0	0	7	3603
5.	«Հայաստան» դաշինք	31	7	24	0	2	14	15	3447.8
6.	«Ազգային օրակարգ» կուսակցություն	3	1	2	0	0	0	3	3093
7.	«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն	22	5	17	0	1	7	14	3022.4
8.	«Վերելք» կուսակցություն	9	8	1	0	0	0	9	2953
9.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	10	5	5	0	0	0	10	2789.6
10.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	9	5	4	0	0	0	9	2612.3
11.	«Համահայկական ազգային պետականություն» կուսակցություն	4	1	3	0	0	0	4	2599.5
12.	«Ինքնիշխան Հայաստան» կուսակցություն	5	4	1	0	0	0	5	2414.9
13.	«Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք» դաշինք	7	3	4	0	1	0	6	2291
14.	Հայաստանի եվրոպական կուսակցություն	3	2	1	0	0	0	3	2206.9
15.	Հայաստանի դեմոկրատական կուսակցություն	7	5	2	0	0	0	7	2175.5
16.	«Արդար Հայաստան» կուսակցություն	5	2	3	0	0	0	5	2105
17.	«Հանրապետություն» կուսակցություն	10	5	5	0	1	0	9	1944.1
18.	«Մեր տունը Հայաստանն է» կուսակցություն	6	4	2	0	0	0	6	1869
19.	Ազատական կուսակցություն	2	0	2	0	0	0	2	1601
20.	«Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցություն	6	4	2	0	1	0	5	1534.9
21.	«Ազատ հայրենիք» դաշինք	5	3	2	0	0	0	5	1526.6
22.	«5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցություն	4	3	1	0	0	0	4	1451
23.	«Ազատություն» կուսակցություն	3	1	2	0	0	0	3	1256
24.	«Հայոց հայրենիք» կուսակցություն	3	1	2	0	0	0	3	1219
25.	«Միասնական հայրենիք» կուսակցություն	4	2	2	0	0	0	4	966
26.	«Հայոց արժիվներ. միասնական Հայաստան» կուսակցություն	0	0	0	0	0	0	0	0
	<b>Ընդամենը</b>	<b>253</b>	<b>97</b>	<b>156</b>	<b>0</b>	<b>7</b>	<b>56</b>	<b>190</b>	<b>62044</b>

Ա-ԹԻՎԻ հեռուստաալիք

7-12 հունիսի, 2021

Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված նյութերի ընդհանուր քանակը (միավոր)						58			
	Կուսակցություններ/դաշինքներ (Կ/Դ)	Կ/Դ-ին անդրադարձների քանակը (միավոր)	Կ/Դ-ին անդրադարձների ձևը (միավոր)			Կ/Դ-ին անդրադարձների բնույթը (միավոր)			Կ/Դ-ին ամբողջությամբ կամ մասնակի նվիրված նյութերի եթերաժամանակը (վրկ)
			Կ/Դ-ին ամբողջությամբ նվիրված նյութեր	Կ/Դ-ին մասնակի նվիրված նյութեր	Կ/Դ-ի հիշատակումներ	+	-	0	
1.	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	23	9	14	0	0	11	12	953
2.	«Հայաստան» դաշինք	7	4	3	0	0	0	7	467.5
3.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	5	5	0	0	0	0	5	429.5
4.	«Պատիվ ունեմ» դաշինք	6	3	3	0	0	1	5	329.5
5.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	4	3	1	0	0	1	3	305.5
6.	«Միասնական հայրենիք» կուսակցություն	2	2	0	0	0	0	2	174
7.	«5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցություն	3	3	0	0	0	0	3	150.5
8.	«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն	2	2	0	0	0	0	2	116
9.	«Արդար Հայաստան» կուսակցություն	2	2	0	0	0	0	2	115
10.	«Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցություն	3	3	0	0	0	0	3	112
11.	«Հայոց հայրենիք» կուսակցություն	2	2	0	0	0	0	2	108.5
12.	«Ազատություն» կուսակցություն	1	1	0	0	0	0	1	96
13.	«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն	3	3	0	0	0	0	3	96
14.	«Ինքնիշխան Հայաստան» կուսակցություն	1	1	0	0	0	0	1	86
15.	«Հանրապետություն» կուսակցություն	1	1	0	0	0	0	1	77
16.	«Վերելք» կուսակցություն	1	1	0	0	0	0	1	76
17.	Հայաստանի դեմոկրատական կուսակցություն	2	2	0	0	0	0	2	66
18.	«Ազգային-ժողովրդավարական բևեռ» համահայկական կուսակցություն	1	1	0	0	0	0	1	64
19.	«Ազգային օրակարգ» կուսակցություն	1	1	0	0	0	0	1	63
20.	«Մեր տունը Հայաստանն է» կուսակցություն	1	1	0	0	0	0	1	57
21.	«Ազատ հայրենիք» դաշինք	1	1	0	0	0	0	1	50
22.	«Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք» դաշինք	1	1	0	0	0	0	1	47
23.	Ազատական կուսակցություն	1	1	0	0	0	0	1	44
24.	Հայաստանի եվրոպական կուսակցություն	1	1	0	0	0	0	1	42
25.	«Համահայկական ազգային պետականություն» կուսակցություն	0	0	0	0	0	0	0	0
26.	«Հայոց արժիվներ. միասնական Հայաստան» կուսակցություն	0	0	0	0	0	0	0	0
	<b>Ընդամենը</b>	<b>75</b>	<b>54</b>	<b>21</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>13</b>	<b>62</b>	<b>4125</b>

«Արմենիա» հեռուստաալիք

7-12 հունիսի, 2021

Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված նյութերի ընդհանուր քանակը (միավոր)						63			
Կուսակցություններ/դաշինքներ (Կ/Դ)	Կ/Դ-ին անդրադարձների քանակը (միավոր)	Կ/Դ-ին անդրադարձների ձևը (միավոր)			Կ/Դ-ին անդրադարձների բնույթը (միավոր)			Կ/Դ-ին ամբողջությամբ կամ մասնակի նվիրված նյութերի եթերաժամանակը (վրկ)	
		Կ/Դ-ին ամբողջությամբ նվիրված նյութեր	Կ/Դ-ին մասնակի նվիրված նյութեր	Կ/Դ-ի հիշատակումներ	+	-	0		
1.	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	33	13	20	0	2	15	16	2551
2.	«Հայաստան» դաշինք	11	6	5	0	0	0	11	1241
3.	«Պատիվ ունեմ» դաշինք	11	7	4	0	0	1	10	1032
4.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	6	6	0	0	0	0	6	675.5
5.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	6	5	1	0	0	1	5	626.5
6.	«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն	3	3	0	0	0	1	2	221
7.	«Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք» դաշինք	2	2	0	0	0	0	2	90
8.	Հայաստանի դեմոկրատական կուսակցություն	2	2	0	0	0	0	2	86
9.	«Հանրապետություն» կուսակցություն	1	1	0	0	0	0	1	86
10.	«Միասնական հայրենիք» կուսակցություն	1	1	0	0	0	0	1	84
11.	«Վերելք» կուսակցություն	1	1	0	0	0	0	1	73
12.	«Ազգային-ժողովրդավարական բևեռ» համահայկական կուսակցություն	1	1	0	0	0	0	1	71
13.	«Ազատություն» կուսակցություն	1	1	0	0	0	0	1	69
14.	«Մեր տունը Հայաստանն է» կուսակցություն	1	1	0	0	0	0	1	65
15.	«Արդար Հայաստան» կուսակցություն	1	1	0	0	0	0	1	64
16.	«Ազատ հայրենիք» դաշինք	1	1	0	0	0	0	1	60
17.	«Համահայկական ազգային պետականություն» կուսակցություն	1	1	0	0	0	0	1	59
18.	Հայաստանի եվրոպական կուսակցություն	1	1	0	0	0	0	1	53
19.	«5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցություն	1	1	0	0	0	0	1	51
20.	Ազատական կուսակցություն	1	1	0	0	0	0	1	49
21.	«Ազգային օրակարգ» կուսակցություն	1	1	0	0	0	0	1	48
22.	«Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցություն	1	1	0	0	0	0	1	33
23.	«Ինքնիշխան Հայաստան» կուսակցություն	1	1	0	0	0	0	1	30
24.	«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն	1	1	0	0	0	0	1	14
25.	«Հայոց հայրենիք» կուսակցություն	1	1	0	0	0	0	1	13
26.	«Հայոց արժիվներ. միասնական Հայաստան» կուսակցություն	0	0	0	0	0	0	0	0
	<b>Ընդամենը</b>	<b>91</b>	<b>61</b>	<b>30</b>	<b>0</b>	<b>2</b>	<b>18</b>	<b>71</b>	<b>7445</b>



«Երկիր Մեդիա» հեռուստաալիք

7-12 հունիսի, 2021

Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված նյութերի ընդհանուր քանակը (միավոր)						73			
	Կուսակցություններ/դաշինքներ (Կ/Դ)	Կ/Դ-ին անդրադարձների քանակը (միավոր)	Կ/Դ-ին անդրադարձների ձևը (միավոր)			Կ/Դ-ին անդրադարձների բնույթը (միավոր)			Կ/Դ-ին ամբողջությամբ կամ մասնակի նվիրված նյութերի եթերաժամանակը (վրկ)
			Կ/Դ-ին ամբողջությամբ նվիրված նյութեր	Կ/Դ-ին մասնակի նվիրված նյութեր	Կ/Դ-ի հիշատակումներ	+	-	0	
1.	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	62	18	44	0	0	38	24	13760
2.	«Հայաստան» դաշինք	36	16	20	0	11	3	22	8382
3.	«Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցություն	4	0	4	0	0	0	4	2047
4.	«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն	9	4	5	0	0	2	7	2011
5.	«Միասնական հայրենիք» կուսակցություն	2	0	2	0	0	0	2	1782
6.	«Վերելք» կուսակցություն	2	0	2	0	0	0	2	1782
7.	«5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցություն	3	0	3	0	0	0	3	1765
8.	«Ազատություն» կուսակցություն	2	1	1	0	0	0	2	1558
9.	«Պատիվ ունեմ» դաշինք	23	5	18	0	0	2	21	1546
10.	«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն	1	0	1	0	0	0	1	1299
11.	«Հայոց հայրենիք» կուսակցություն	1	0	1	0	0	0	1	1186
12.	«Արդար Հայաստան» կուսակցություն	1	0	1	0	0	0	1	1096
13.	«Ազատ հայրենիք» դաշինք	2	0	2	0	0	0	2	971
14.	«Ինքնիշխան Հայաստան» կուսակցություն	2	0	2	0	0	0	2	908
15.	«Համահայկական ազգային պետականություն» կուսակցություն	1	0	1	0	0	0	1	900
16.	«Մեր տունը Հայաստանն է» կուսակցություն	3	0	3	0	0	0	3	809
17.	«Ազգային-ժողովրդավարական բևեռ» համահայկական կուսակցություն	1	0	1	0	0	0	1	774
18.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	4	1	3	0	0	0	4	715
19.	«Ազգային օրակարգ» կուսակցություն	1	0	1	0	0	0	1	696
20.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	6	1	5	0	0	0	6	349
21.	«Հանրապետություն» կուսակցություն	2	0	2	0	0	0	2	72
22.	Հայաստանի դեմոկրատական կուսակցություն	2	1	1	0	0	0	2	58
23.	Հայաստանի եվրոպական կուսակցություն	1	0	1	0	0	0	1	9
24.	Ազատական կուսակցություն	0	0	0	0	0	0	0	0
25.	«Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք» դաշինք	0	0	0	0	0	0	0	0
26.	«Հայոց արժիվներ. միասնական Հայաստան» կուսակցություն	0	0	0	0	0	0	0	0
	<b>Ընդամենը</b>	<b>171</b>	<b>47</b>	<b>124</b>	<b>0</b>	<b>11</b>	<b>45</b>	<b>115</b>	<b>44475</b>

«Կենտրոն» հեռուստաալիք

7-12 հունիսի, 2021

Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված նյութերի ընդհանուր քանակը (միավոր)						96			
	Կուսակցություններ/դաշինքներ (Կ/Դ)	Կ/Դ-ին անդրադարձների քանակը (միավոր)	Կ/Դ-ին անդրադարձների ձևը (միավոր)			Կ/Դ-ին անդրադարձների բնույթը (միավոր)			Կ/Դ-ին ամբողջությամբ կամ մասնակի նվիրված նյութերի եթերաժամանակը (վրկ)
			Կ/Դ-ին ամբողջությամբ նվիրված նյութեր	Կ/Դ-ին մասնակի նվիրված նյութեր	Կ/Դ-ի հիշատակումներ	+	-	0	
1.	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	49	19	30	0	0	23	26	4332.3
2.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	8	7	1	0	0	0	8	2808.5
3.	«Հայաստան» դաշինք	19	9	10	0	0	4	15	2760.3
4.	«Հանրապետություն» կուսակցություն	5	4	1	0	0	0	5	2449.5
5.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	10	7	1	2	0	0	10	1997
6.	«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն	10	6	3	1	1	0	9	1901.3
7.	«Պատիվ ունեմ» դաշինք	16	8	7	1	0	2	14	948.8
8.	«Շիրիկյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք» դաշինք	4	4	0	0	0	0	4	392
9.	«Մեր տունը Հայաստանն է» կուսակցություն	3	3	0	0	0	0	3	357
10.	«Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցություն	3	3	0	0	0	0	3	352
11.	«Վերելք» կուսակցություն	2	2	0	0	0	0	2	232
12.	Հայաստանի եվրոպական կուսակցություն	2	1	1	0	0	0	2	223.6
13.	«Ինքնիշխան Հայաստան» կուսակցություն	3	3	0	0	0	0	3	221
14.	Հայաստանի դեմոկրատական կուսակցություն	2	2	0	0	0	0	2	214
15.	«5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցություն	3	3	0	0	0	0	3	192.8
16.	«Ազատ հայրենիք» դաշինք	2	2	0	0	0	0	2	153
17.	«Ազգային-ժողովրդավարական բևեռ» համահայկական կուսակցություն	3	2	1	0	0	1	2	151
18.	«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն	2	2	0	0	0	0	2	149
19.	«Ազատություն» կուսակցություն	2	2	0	0	0	0	2	145.5
20.	«Արդար Հայաստան» կուսակցություն	2	2	0	0	0	0	2	138
21.	«Համահայկական ազգային պետականություն» կուսակցություն	2	1	1	0	0	0	2	71.6
22.	«Հայոց հայրենիք» կուսակցություն	1	1	0	0	0	0	1	55
23.	Ազատական կուսակցություն	2	0	2	0	0	0	2	44.6
24.	«Միասնական հայրենիք» կուսակցություն	1	0	1	0	0	0	1	19.6
25.	«Ազգային օրակարգ» կուսակցություն	1	0	1	0	0	0	1	17.6
26.	«Հայոց արժիվներ. միասնական Հայաստան» կուսակցություն	0	0	0	0	0	0	0	0
	<b>Ընդամենը</b>	<b>157</b>	<b>93</b>	<b>60</b>	<b>4</b>	<b>1</b>	<b>30</b>	<b>126</b>	<b>20327</b>

«Շանթ» հեռուստաալիք

7-12 հունիսի, 2021

Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված նյութերի ընդհանուր քանակը (միավոր)						111			
Կուսակցություններ/դաշինքներ (Կ/Դ)	Կ/Դ-ին անդրադարձների քանակը (միավոր)	Կ/Դ-ին անդրադարձների ձևը (միավոր)			Կ/Դ-ին անդրադարձների բնույթը (միավոր)			Կ/Դ-ին ամբողջությամբ կամ մասնակի նվիրված նյութերի եթերաժամանակը (վրկ)	
		Կ/Դ-ին ամբողջությամբ նվիրված նյութեր	Կ/Դ-ին մասնակի նվիրված նյութեր	Կ/Դ-ի հիշատակումներ	+	-	0		
1.	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	25	8	16	1	7	17	3055	
2.	«Մեր տունը Հայաստանն է» կուսակցություն	5	5	0	0	0	5	2821.8	
3.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	6	6	0	0	0	6	1751	
4.	«Հայաստան» դաշինք	19	6	13	0	1	5	13	1611.5
5.	«Ազգային-ժողովրդավարական բևեռ» համահայկական կուսակցություն	5	4	1	0	1	0	4	1436.4
6.	«Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցություն	6	6	0	0	0	0	6	1423.5
7.	Հայաստանի դեմոկրատական կուսակցություն	7	7	0	0	0	0	7	1379.5
8.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	6	6	0	0	0	0	6	1372
9.	«Ազատ հայրենիք» դաշինք	4	4	0	0	0	0	4	1364.5
10.	«Հանրապետություն» կուսակցություն	5	5	0	0	0	0	5	1302.5
11.	Հայաստանի եվրոպական կուսակցություն	4	4	0	0	0	0	4	1280.8
12.	«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն	12	5	7	0	0	3	9	1271
13.	«Պատիվ ունեմ» դաշինք	18	5	13	0	0	4	14	1100
14.	«Արդար Հայաստան» կուսակցություն	4	4	0	0	0	0	4	411.5
15.	«Ինքնիշխան Հայաստան» կուսակցություն	3	3	0	0	0	0	3	384
16.	«Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք» դաշինք	4	4	0	0	0	0	4	382.5
17.	«Վերելք» կուսակցություն	4	4	0	0	0	0	4	379.5
18.	«5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցություն	4	4	0	0	0	0	4	373.5
19.	«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն	4	4	0	0	0	0	4	348
20.	Ազատական կուսակցություն	3	3	0	0	0	0	3	346
21.	«Համահայկական ազգային պետականություն» կուսակցություն	2	2	0	0	0	0	2	313
22.	«Միասնական հայրենիք» կուսակցություն	4	4	0	0	0	0	4	302
23.	«Հայոց հայրենիք» կուսակցություն	2	2	0	0	0	0	2	281
24.	«Ազգային օրակարգ» կուսակցություն	2	2	0	0	0	0	2	271
25.	«Ազատություն» կուսակցություն	3	3	0	0	0	0	3	263.5
26.	«Հայոց արժիվներ. միասնական Հայաստան» կուսակցություն	0	0	0	0	0	0	0	0
	<b>Ընդամենը</b>	<b>161</b>	<b>110</b>	<b>50</b>	<b>1</b>	<b>3</b>	<b>19</b>	<b>139</b>	<b>25225</b>

Հայաստանի հանրային ռադիո  
7-12 հունիսի, 2021

Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված նյութերի ընդհանուր քանակը (միավոր)						20			
	Կուսակցություններ/դաշինքներ (Կ/Դ)	Կ/Դ-ին անդրադարձների քանակը (միավոր)	Կ/Դ-ին անդրադարձների ձևը (միավոր)			Կ/Դ-ին անդրադարձների բնույթը (միավոր)			Կ/Դ-ին ամբողջությամբ կամ մասնակի նվիրված նյութերի եթերաժամանակը (վրկ)
			Կ/Դ-ին ամբողջությամբ նվիրված նյութեր	Կ/Դ-ին մասնակի նվիրված նյութեր	Կ/Դ-ի հիշատակումներ	+	-	0	
1.	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	14	1	13	0	0	3	11	1043
2.	«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն	8	0	8	0	0	0	8	516
3.	«Պատիվ ունեմ» դաշինք	7	0	7	0	0	1	6	425
4.	«Հայաստան» դաշինք	6	0	6	0	0	3	3	328
5.	Հայաստանի դեմոկրատական կուսակցություն	4	0	4	0	0	0	4	235
6.	Հայաստանի եվրոպական կուսակցություն	3	0	3	0	0	0	3	227
7.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	3	0	3	0	0	0	3	195
8.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	3	0	3	0	0	0	3	154
9.	«Հանրապետություն» կուսակցություն	4	0	4	0	0	0	4	145
10.	«Արդար Հայաստան» կուսակցություն	3	0	3	0	0	0	3	141
11.	«Ազգային-ժողովրդավարական բնեռ» համահայկական կուսակցություն	2	0	2	0	0	0	2	139
12.	«Վերելք» կուսակցություն	2	0	2	0	0	0	2	139
13.	Ազատական կուսակցություն	3	0	3	0	0	0	3	135
14.	«Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք» դաշինք	2	0	2	0	0	0	2	97
15.	«Հայոց հայրենիք» կուսակցություն	1	0	1	0	0	0	1	87
16.	«Մեր տունը Հայաստանն է» կուսակցություն	1	0	1	0	0	0	1	87
17.	«Համահայկական ազգային պետականություն» կուսակցություն	2	0	2	0	0	0	2	84
18.	«Ազատություն» կուսակցություն	2	0	2	0	0	0	2	74
19.	«Միասնական հայրենիք» կուսակցություն	1	0	1	0	0	0	1	67
20.	«5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցություն	1	0	1	0	0	0	1	67
21.	«Ազգային օրակարգ» կուսակցություն	1	0	1	0	0	0	1	52
22.	«Ինքնիշխան Հայաստան» կուսակցություն	1	0	1	0	0	0	1	52
23.	«Ազատ հայրենիք» դաշինք	1	0	1	0	0	0	1	48
24.	«Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցություն	1	0	1	0	0	0	1	11
25.	«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն	0	0	0	0	0	0	0	0
26.	«Հայոց արժիվներ. միասնական Հայաստան» կուսակցություն	0	0	0	0	0	0	0	0
	<b>Ընդամենը</b>	<b>76</b>	<b>1</b>	<b>75</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>7</b>	<b>69</b>	<b>4548</b>



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

[www.ypc.am](http://www.ypc.am)